ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻՋԴԱՒԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (XVIII Դ. 60-70-ԱԿԱՆ ԹԹ.)

Յ. Նալեանի պատրիարքութեան առաջին շրջանն (1741-1749) աւարտուեց, ինչպէս յայտնի է, Վարդապետ Պրոխորոնի միջադէպով, որը փակուեց իշխանութիւնների միջամտութեամբ եւ վերջինիս աքսորով ու բանտարկութեամբ[1]: Յայտնի է նաեւ, որ Պրոխորոնը, այնու ամենայնիւ, ինքնակոչ չէր, այլ պատրիարքական պաշտօնը ստացել էր միաբանելով «ի ծածուկ զերիս ոմանց յերեւելեաց՝ մատոյց բազում ինչ առ եպարքոսն եւ առ ոմանս յաւագանւոյն»[2]: Պարզ չէ նաեւ անուանապէս, թէ ովքեր էին այդ երեւելիները, թէեւ Մ. Արք. Օրմանեանը որոշ յստակութիւն է մտցնում խնդրի մէջ, նշելով, որ «Յակոբ պատրիարքէն վասն եղեռնագործութեանց իւրեանց յանդիմանեցեալ քանի մի ազդեցիկ չար իշխանք կային, որոնք ուզեցին պատրիարքէն վրէժ լուծել»[3]:

Կոստանդնուպոլսի հայ համայնքում դաւանական հակասութիւնները նոր դրսեւորումներ ստացան Յ. Նալեանի երկրորդ պատրիարքութեան շրջանում՝ 1761 թ.: Այս ժամանակահատուածում մայրաքաղաքի հայերի կեանքում կայսրութեան մէջ սոցիալական փոփոխութիւնների համեմատ՝ տեղի էին ունենում անխուսափելի տեղաշարժեր: Երկրի ներքին եւ արտաքին ապրանքաշրջանառութեան ընդլայնման պայմաններում աճում էր ֆինանսական դրամագլխի դերն ու նշանակութիւնը՝ ստեղծելով աւելի բարենպաստ պայմաններ վերջինիս վերարտադրութեան համար: Փոփոխութիւններ էին կատարւում յատկապէս առեւտրում եւ փոխատուական դրամագլխի ասպարէզում յաջողակ հայերի գործունէութեան տեսակէտից: XVIII դ. երկրորդ կէսին օսմանեան տնտեսութեան ոլորտում իր իրաւունքներն ու տեղն է հաստատում հայ սեղանաւորութիւնը ներկայացնող նոր դասը՝ ամիրայութիւնը, որը սպասարկում էր մայրաքաղաքի վարչական վերնախաւին, այլեւ գաւառական ռազմավարչական բարձր պաշտօնէութեանն ու նրա արբանեակներին: Վերջիններիս ռազմական ու տնտեսական գործերի կարգաւորումն ու կառավարումը ամիրայութեանը, ինչպէս եւ հրեայ սեղանաւորներին ու արհեստապետերին, հնարաւորութիւն էր տալիս ոչ միայն հարստանալ, այլեւ ամրապնդել իրենց սոցիալական ու գործառութային նշանակութիւնն իրենց համայնքներում: Տեղի էր ունենում հայ արհեստապետերի ու սեղանաւորական դասի՝ օսմանեան պաշտօնէութեան հետ իւրայատուկ սերտաճում: Իր քանակական կազմն ընդլայնած ամիրայութիւնը Կոստանդնուպոլսից էր սկսում տնտեսական ու վարչական մեկնարկը՝ իւրայինների շրջան ընդգրկելով ձեռներէց անհատների, շնորհալի մարդկանց՝ նաեւ գաւառներից, որոնք ինքնահաստատւում եւ յաջողութիւնների էին հասնում Թուրքիայի խոշոր քաղաքներում: Ամիրայութեան, որպէս ամրապնդուող դասի պայմաններում հայ համայնքում շարունակւում եւ նոր որակներ էին ձեռք բերում հակասութիւնները ազդեցութիւն հաստատելու, միաբէվէլիական համակարգում մնայուն տեղեր զբա-

---

[1] **Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 862-863:

[2] Անդ, էջ 862:

[3] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3431:

ղեցնելու եւ հայաբնակ թաղերի եկամուտները տնօրինելու ուղղութեամբ։ Իր հերթին դաւանական պայքարը դառնում էր նշուած հակասութիւնների մի ինքնատիպ ասպարէզ։ Պատրիարք Յ. Նալեանի առաջին պաշտօնավարութեան աւարտին եւ մասնաւորապէս նրա վերընտրութեան հնարաւորութիւնը, «դժպատեհ համարողների» առկայութեամբ[4], ցոյց է տալիս, որ արդէն 1749 թ. համայնքի վերնախաւում պայքար էր ընթանում իշխանութեան լծակներին տիրանալու համար։ Նոյնիսկ Պրոխորոն Վարդապետի յայտնութիւնը, կարծում եմ, կարելի է բացատրել համայնքում իշխանութեան ձգտող դեռեւս սակաւաթիւ եւ յանդուգն ոյժերի գործելակերպով։ Այդ նրանք էին, որ «թագնաբար եւ կապալաւ անոր անունին հրովարտակ հաեցին եւ Մայր եկեղեցին բերին[5]», հաւանաբար, այս խաղից անտեղեակ հոգեւորականին։ Աւելին, ոչ միայն եկեղեցում հաւաքուած ժողովուրդը, այլեւ մեծամեծների մեծ մասը, պարզւում է, անտեղեակ էր այս ամէնին[6]։

Սրա հետ մէկտեղ, հաւանականութիւնից զուրկ չէ նաեւ Գ. Բամպուքճեանի վկայակոչած այն տեսակէտը, որի հեղինակը «Պրոխորոն Վարդապետի ոտնձգութիւնը լատիններու կողմէ կազմակերպուած ըլլալը կը հաւաստէ»[7]։

Այս մանրամասները կարծէք, ամբողջացնում են Պրոխորոն Վրդ. դիմանկարը, որպէս իրադարձութիւնների մէջ ակամայ ներքաշուած մէկի, ով հանրութեան մէջ ճանաչուած չի եղել, եւ հէնց այդ էլ եղել է նրա առաքինութիւնն իրեն առաջ մղող, «չար իշխանների» աչքին, եւ որը, կարծում եմ, օգնում է մտադրութիւնների ընդհանուր իմաստով նոյնականացնել այդ նոյն իշխաններին։ Դրանք վերնախաւի շարքերը համալրած այն մարդիկ էին, որոնք յայտնուել էին այնտեղ, այդ թւում նաեւ գաւառներից՝ գործի դնելով իրենց արմունկները եւ մնացեալ ուժային կարողութիւնները ազգի վերնամասում նիւթական ու հոգեւոր տեղ զբաղեցնելու համար եւ որի ընթացքում կանգ չէին առել դատապարտելի գործողութիւնների առջեւ՝ յանդիմանուելով Նալեան Պատրիարքի կողմից։ Այլ կերպ, յիշեալ ամբողջ միջադէպը ցոյց է տալիս, որ հայ համայնքում կատարւում էին գործընթացներ, որոնք յատուկ են հանրային կամ սոցիալական փոփոխութիւններ ապրող միջավայրին։ Այդպիսի երեւոյթ տեսնում ենք 1740-1770-ական թթ. պոլսահայ համայնքում, որպէս ամիրայութեան՝ վերնախաւային նոր դասի յայտնութեամբ, եւ որը գալիս էր փոխարինելու մահտեսիների բաւականաչափ անձեւ բազմութեանը։ Այս իմաստով նկատենք, որ մահտեսի կարող էին լինել եւ համայնքում պատուախնդրաբար այդպէս կոչուել պարզապէս հարուստ հայերը, որոնք ազգային միջավայրում, բայց ոչ նրա սահմաններից դուրս, կարող էին ճանաչուած լինել որպէս իշխանութիւն եւ հեղինակութիւն ունեցող անձինք։ Ամիրայութիւնը, մինչդեռ, Օսմանեան պետութեան կողմից ճանաչում գտած, միւթէվէլիական համակարգի (համայնքի սեփականութիւնների, եկամուտների եւ դրանց ծախսերի վերահսկողներ, օսմանեան խոշոր պաշտօնեաների դրամական գործերի տնօրինողներ եւ այլն) մաս կազմող այն խաւն էր, որը տնօրինող տեղ էր զբաղեցնում իր միլէթի ներքին գործերում։ Հայ համայնքում այդ տեղը առաւել յստակեցնելու համար նշենք, որ ամիրաներից մէկը կամ մի քանիսը, ըստ օսմանեան վարչակարգում ունեցած դիրքի, համապատասխան ազդեցութիւն ունէին միլէթի միջավայրում՝ փաստականօրէն գերադաս եւ ուղղորդող ոյժ

---

[4] **Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 863:

[5] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3431:

[6] Անդ:

[7] **Գ. Բամպուքճեան**, Յակոբ Պատրիարք Նալեան (1706-1764), Ստանպուլ, 1981, էջ 168:

ներկայացնելով պատրիարքի առջեւ։ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքները, սկսած իրենց ընտրութիւնից եւ ապա պաշտօնավարութեամբ եւ ընդհուպ մինչեւ պաշտօնանկութիւն, յայտնապէս կախում ունէին ամիրաներից, որոնք հանդէս էին գալիս որպէս կապող եւ միջակայ օղակ՝ պատրիարքների, նրանց հոգեւոր եւ գործնական գործառոյթների ու օսմանեան իշխանութիւնների միջեւ։

Ինչ ասել կ'ուզի, ամբողջ XVIII դ. երկրորդ կէսին եւ յետագայում, համայնքում հասկանալի պայքար էր ընթանում, եւ անհատական, եւ խմբակցական ընդգրկումներով, նոյնիսկ ամիրաների (կամ մահտեսիների) միջեւ՝ իշխանութեան եւ դիրքի տիրանալու համար։ Կողմերը չէին խորշում, յօգուտ սեփական շահերի, օգտագործել նաեւ դաւանական հակասութիւնները։ Այդ տեսնում ենք նաեւ Յ. Նալեանի պատրիարքութեան երկրորդ շրջանում՝ 1761 թ., երբ հայ կաթոլիկների դէմ իրենց անհանդուրժող կեցուածքը ցուցադրեցին պահպանողականները՝ ի դէմս Բալուեցի Տէր Մանուէլ Քահանայի։ Ժամանակի նշանաւոր պատմաբանը դիպուկ բնութագրով է ներկայացնում նրան, որով կարելի է հիմնաւորել նրա գործողութիւնների եւ վարքագծի նկատմամբ հանրային արձագանգը. «էր ի նոյն աւուրս ի Կոստանդինուպօլիս երեց ոմն... այր յոխորտաբարոյ և խռովասէր, ճարտար՝ ի յուզել աղմուկ շփոթի, և արագ ի հասուցանել այլոց զվնաս. յամենայնի անհանդարտ, անզուսպ ի գնացս, և անսանձ ի բանս. և զի ուներ իւր պաշտպան զոմանս ի մեծամեծացն Հայոց, Տիպաճեանի, Յովհաննէս Սափրիչի և այլոց», որոնք խրախուսում էին պատրիարքի հակառակորդ ամիրաների, առանձնապէս եռանդուն ամիրա Գասպար Մուրատեանի կողմից, «որ Տէր Մանուէլի բարեկամներէն էր»,- յաւելում է Հրանդ Ասատուրը[8]։ Մանուէլի եւ նրա իւրայինների ամբաստանութիւնների հիման վրայ, որտեղ մանաւանդ մատնացոյց էին արւում բազմաթիւ կաթոլիկամէտ հայեր, իշխանութիւնները հսկողութեան տակ վերցրին Կոստանդնուպոլսի կաթոլիկական եկեղեցիները եւ 1761 թ. Նոյեմբերին տեղերում ձերբակալեցին այդտեղ յաճախող հայերին՝ մի քանի տասնեակ մարդու[9]։ Ձերբակալութիւնները շարունակուեցին նաեւ 1762 թ., որոշակի նշուած ամբաստանեալների ցուցակով, որոնց մէջ կային եւ հոգեւորական, եւ աշխարհիկ անձինք, այդ թւում եւ հանրայայտ ակնավաճառ Յովհաննէս Թովմաճանեանը[10]։ Ինքը՝ Մանուէլը, այս գործողութիւնների ամբողջ ընթացքում ուղեկցում էր արքունի զինուած ջոկատին[11], անշուշտ, օգնելով նրան կասկածեալներին ի յայտ բերելու եւ նոյնականացնելու գործում։

Այս ակնյայտօրէն յօրինածոյ կամ ճոխացրած պատմութեանը, աւելի համառօտ եւ զուսպ, կարծում ենք՝ դարձեալ Թովմաճանեանին հետեւելով, անդրադարձել է նաեւ Մ. Չամչեանը։ Սակայն, ըստ նրա, Յ.Նալեանը գրել է ընդամէնը «թուղթ յարգութեան ի Հռովմ»[12] եւ որն ամենեւին չի նշանակում դաւանական հնազանդութեան դիմում։

Յ. Թովմաճանեանը, եթէ նկատի ունենանք հայ կաթոլիկական միջավայրի հետ նրա ունեցած սերտ շփումները (դաստիարակուել էր Վենետիկի միաբանութեան դպրոցում)՝ Յ. Նալեանի յայտնի կեցուածքը չափազանցողներից էր՝ ըստ կաթոլիկական մեկնաբանութիւնների։ Եւ այս տեսակէտից եւս յոյժ նման հայրենի եկեղեցուն փարուած, բայց կա-

---

[8] **Հ. Ասատուր**, Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ստանպոլ, 2011, էջ 116։

[9] **Մ. Արք. Օրմանեան**, նշ. աշխ., էջ 3477։ **Գր. Գալէմքեարեան**, Կենսագրութիւն Սարգիս Արքեպ. Սառաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1908, էջ 102։

[10] **Մ. Չամչեան**, նշ. աշխ., էջ 868-869։

[11] **Մ. Չամչեան**, նշ. աշխ., էջ 869։

[12] **Մ. Չամչեան**, նշ. աշխ., էջ 868։

թոլիկների հետ իր գործակցութեամբ յայտնի Սարգիս Վրդ. Սարաֆեանի երկդիմի ընթացքին։ Յիրաւի, Մխիթարեան Աբբահայր Ստեփաննոս Մելքոնեանին գրած նամակում Յ. Թովմաճանեանը փաստում է, որ պատրիարքի կաթոլիկական հակումների մասին լրատուութեան (կամ բամբասանքի) աղբիւրներից մէկը հէնց ինքը՝ Ս. Վրդ. Սարաֆեանն է։ Առիթը եղել էր Յ. Նալեանի տպագրած «Գրքուկ կոչեցեալ ճրագ ճշմարտութեան» աշխատութիւնը՝ ընդդէմ Մխիթար Աբբայի եւ կաթոլիկական քարոզիչ Մոմֆորտի դաւանական մօտեցումների։ Նամակում Յ. Թովմաճանեանը յայտնում է. «Թեպէտ շատ աղաչեցի պատրիարգին, որ պասմա չանէ (վերոյիշեալ գիրքը-**Ա. Խ.**), բայց չեղև հնար, և պատճառն այս էր, զի Սէրգիս վարդապետն (Սարաֆեանը-**Ա. Խ.**) ի բազում տանս սառաֆաց ասացեալ է առաջի արաց Վէմ հաւատոյ և նարեկեան մեկնութեան քրքերն, իբր թէ այժմ ճանաչել է ճշմարտութեան ճանապարհն (իմա հռոմեադաւանութիւնը-**Ա. Խ.**) և յայնժամ մոլորեալ իցէ»[13]։

Մէկ անգամ եւս անդրադառնանք Յ. Կոլոտի եւ Յ. Նալեանի դիրքորոշմանն այս հիմնախնդրում։ Հարկ է նկատել, որ անգամ հայ հանրութեան միջդաւանական կրքերի բորբոքման պայմաններում նրանք շարունակում էին մնալ ոչ միայն հայ դաւանութեան հաւատարիմ սպասաւորներ, այլեւ օսմանեան պետութեան պաշտօնեաներ, իբրեւ միջնորդներ իրենց միլեթի եւ իշխանութիւնների միջեւ։ Յայտնի են Յ. Կոլոտի ջանքերը՝ գործակցելու Կոստանդնուպոլսում ֆրանսիական դիւանագիտութեան հետ՝ Ս. Տեղեաց շուրջ հայ-յունական բանավէճը հարթելու ասպարէզում, ինչպէս եւ կառավարութեան ճնշման տակ (ֆրանսիական դեսպանի բողոքից յետոյ), 1737-1738 թթ. հակահռոմեական որոշ դարձուածներից հրաժարուելը՝ ժամերգութեան ժամանակ։ Այս ամէնի մէջ դաւանական տեղատուութեան ոչ մի նշոյլ չկար, բայց այս պաշտօնական առնչութիւնները ծայրայեղ ներշնչումներին հակամէտ ամբոխի մէջ կարող էին կասկածներ ծնել պատրիարքի ուղղադաւանութեան վերաբերեալ եւ, պէտք է կարծել, որ 1737 թ. Օգոստոսին Յ.Կոլոտի դէմ Մայր եկեղեցում ընդվզումը[14] դրա արդիւնքն էր։

Դաւանական ընկալումներում միանշանակ պահպանողականութիւն ցուցաբերող ազգային հատուածի (որոնց շարքերը մշտապէս թարմացւում էին Արեւմտեան Հայաստանից եկած գաղթականներով) գայթակղութեան քար էին նաեւ Յ. Կոլոտի եւ Յ. Նալեանի հովանաւորած՝ եւրոպական աստուածաբանական գրքերի հայերէն թարգմանութիւնների հրատարակութիւնները։ Հայ պահպանողականութիւնը, յատկապէս նրա «ռամիկ» զանգուածն իր գաւառական հոգեւոր քարոզիչներով եւ դասերով սրբապղծութիւն էին համարում ազգային եկեղեցու պատուիրաններից ու ծէսերից շեղուող ամէն մի քայլ՝ այդ համարելով կործանարար մի բան՝ հայրենի եկեղեցու ինքնութեան դէմ։ Եւ այս իմաստով տեղական բանսարկուների եւ օսմանեան իշխանութիւնների առջեւ լայն դուռ էր բացւում կասկածեալ կամ անցանկալի անձանց պատժելու համար, որ, ի դէպ, կիրառւում էր հայկական միջավայրում՝ օսմանեան պաշտօնէական շրջանների բացայայտ խրախուսման պայմաններում։ Այս տեսակէտից ուշադրութիւն դարձնենք Գր. Պասմաճեանի պատրիարքութիւնը հաստատող ֆերմանի (3 Յունիսի, 1764 թ.) մի դարձուածին, որ փաստում է վերն ասուածի իրողութիւնը. «Օտար դաւանանքի պատկանող եւ **կաթոլիկութեան յարող անձանց** կողմից կատարուած յանցանքի համար իսկական հայ լուսաւորչական ռեայաներին նեղութիւն չպէտք է պատճառել»[15]

---

[13] **Ղ. Տայեան**, Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, 1707-1773, Վենետիկ, 1930, էջ 180։

[14] Անդ, էջ 67։

[15] **Ա. Փափազեան**, Թուրքական վաւերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16-19-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 184։

*(ընդգծումն իմն է-**Ա. Խ.**)։ Նշուած առաձգական դարձուածի տակ կարող էր, յիրաւի, իր արդարացումը գտնել ամէն մի մտադրութիւն։ Նկատենք, որ արեւմտեան կրօնական գրականութիւնը նոյն իսկ XVIII դ. հայերէն թարգմանուել է Յ. Կոլոտից ու Յ. Նալեանից եւ առաջ, եւ յետոյ, այնպէս որ առնուազն պարզունակ կը լինէր նշուած պատրիարքներին այս հարցում մեղադրել դաւանական մեղանչումների մէջ։ Անգամ այն դէպքերում, երբ նկատի ունենայինք այս պատրիարքների անձնական մասնակցութիւնը (պատուէր թարգմանչին, թարգմանութեան եւ դրա ֆինանսաւորման իրողութիւնը եւ այլն)։ Մէկ անգամ եւս յիշենք, որ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան եւ Ս. Յակոբեանց վանքի պատմաբան Յ. Վրդ. Հաննան հիմնաւորապէս պատճառաբանում էր թարգմանական կրօնական երկերի անհրաժեշտութիւնը հայ մտաւոր իրականութեան մէջ՝ կարեւորելով դրանց իմացական ու ճանաչողական նշանակութիւնը կաթոլիկական քարոզչութեան դէմ ազգային եկեղեցու մղած մաքառումներում։ Եւ այս իմաստով XVIII դ. Կոստանդնուպոլսի հայ իրականութիւնը ներկայացնում է մէկը միւսին հետեւող տեւական լարուածութեան մթնոլորտ, որտեղ առանցքային հակասութիւններից մէկը, թերեւս ամենակարեւորը, մնում էր դաւանական կնճիռը։* Կոստանդնուպոլսի, *Անկիւրիայի եւ կայսրութեան հայաբնակ այլ քաղաքների եկեղեցիներում, թաքուն կամ բացայայտ պայքար էր ընթանում հայկական դաւանանքը պաշտպանող եւ այն վիճարկող լատինամէտ քարոզիչների միջեւ։ Նոյնի դրսեւորումները կարելի էր տեսնել Կոստանդնուպոլսի կաթոլիկական այն եկեղեցիներում, ուր ստէպ յաճախում էին կաթոլիկամէտ հայերը։ Արեւմտեան մարդորսական քարոզչութեանը դիմակայելու, ազգային եկեղեցու իմացական կարողութիւնների հարցն էր առաջ քաշում Յ. Հաննան՝ նկատի առնելով կաթոլիկների հայ ընդդիմախօսների տեսական իմացութիւնը ընդլայնելու պահանջը. «Որքանիցս յաւէտ տեղեկանայ գրոց նոցին, այնքանիցս քաջապէս եւ արիաբար կարեմք պատասխանատրել ընդդիմադրեալ առարկութեանց նոցին ընդ նոսա քաջազինիմք»[16],- գրում է նա։ Իր ժամանակների պահպանողական ծայրայեղներին Հաննան խուսափում էր կրակի տակ առնելուց՝ դաւանական զայրոյթներին տեղիք չտալու հասկանալի մտահոգութեամբ։ Սակայն անցեալին վերաբերող անդրադարձներում դժուար չէ նկատել նրա մերժող հայեացքը ժամանակակից նոյնանման երեւոյթների նկատմամբ։ Թարգմանական գրականութեան հանդէպ թշնամանքը, նկատում էր Հաննան, ծայր էր առնում «ի բարբարոսաբար գիտացն մերայնոց, որք գտանէին յայն ժամանակ յազգս մեր, զորոց կուրացուցեալ էր զաչս մտաց նոցին նախանձն հնագունեղ եւ ատելի եղեալ ախտակրեալ աչաց նոցին»[17]։*

Յիրաւի, ոչ այնքան վաղ անցեալում՝ 1703 թ. Կոստանդնուպոլսում Աւետիք Եւդոկիացի Պատրիարքի փոխանորդ Յովհաննէս Զմիւռնացին հակառակորդներին ըմբերանելու համար դիմել էր այդպիսի անհանդուրժողական միջոցի՝ այրել տալով «ֆռանկաշունչ» հայերէն տպագրուած գրքեր (Յիսուս Որդի, Բուրաստան աղօթից, Թովմաս Գեմբացի[18] եւ այլն)։ Ի դէպ, որքան մեզ յայտնի է՝ բացառիկ մի դէպք այս դաւանական առճակատումների ընթացքում։

Հայ կաթոլիկամէտների եւ ուղղադաւանների միջեւ ներհակութիւններն ու բանակռիւները շարունակուեցին Գրիգոր Վրդ. Պասմաճեանի՝ Կոստանդնուպոլսի Հայոց

---

[16] **Յովհաննէս Հաննա**, Գիրք պատմութեան Սրբոյ եւ Մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս եւ սրբոց տնօրինականաց Տեղեաց, Կ. Պոլիս, 1734, էջ 178։

[17] Անդ, էջ 173։

[18] **Մ. Չամչեան**, նշ. աշխ., էջ 742։

պատրիարք ընտրուելուց յետոյ եւս (1764-1773)։ Մեր պատմագիտութեան մէջ նա յայտնի է իր «Յիշատակարան»-ով, որն ըստ արժանւոյն գնահատել եւ գիտական շրջանառութեան մէջ է դրել վաստակաշատ հայագէտ Բ. Վրդ. Կիւլէսէրեանը։

*Նոր պատրիարքին, երեւում է, կասկածով եւ թերահաւատութեամբ ընդունեցին պահպանողական ամիրաներն ու մահտեսիները՝ միշտ պատրաստ համայնքում գրգռելու մանկամիտ ամբոխին եւ ելք տալով նրա մոլեռանդութեանը։ Այդպիսի տրամադրութիւններին էր արձագանգում Կոստանդնուպոլսում գտնուող Վենետիկի միաբան Հ. Վրդ. Զամչեանցը՝ Աբբա Ստեփաննոս Վրդ.1764 թ. Յունիսի 19-ին գրած նամակում. «Գրիգոր վարդապետն, որ հեզ եւ միամիտ ոմն է, զնա արարին պատրիարգ։ Բայց մինչ չև էր զգեցեալ նորա կապայ, ժողովուրդն ոչ կամէր զնա, զի բազումք ասէին թէ նա Յոհաննէս պատրիարգին չրախն (աշակերտ-**Ա. Խ.**) է, զի Յոհաննէս պատրիարգին չրախները՝ ամէնքը կաթոլիկ են»[19]։*

Գր. Պասմաճեանը ժառանգեց ոչ միայն Յ. Նալեանի հոգեւոր իշխանութիւնը, այլեւ դաւանական ներհակութիւններից ծնուած ամբողջ դժուարութիւնները (1764, 13 Մայիս)[20]։ Նրա «Յիշատակարանն» աչքի է ընկնում իր անմիջականութեամբ ու շիտակութեամբ, այն կարեւոր սկզբնաղբիւր է, որտեղ տեղ են գտել ժամանակի պոլսահայ համայնքի շատ հիմնախնդիրներ, ամէնից առաջ՝ վերնախաւի բարքերն ու բարոյականութիւնը, պատրիարքական իշխանութեան տեղն ու կարողութիւնները օսմանեան միջավայրում, այլեւ Կոստանդնուպոլիս-Էջմիածնի կաթողիկոսութիւն փոխյարաբերութիւնները, ամիրայական դասի վարքագիծը համայնքի հոգեւոր իշխանութիւնների նկատմամբ եւ այլն։ Մենք կը սահմանափակուենք խնդրոյ առարկայ եւ պատրիարքի գնահատած՝ ժամանակի ամիրաների հանրային նկարագրի, դաւանական խնդիրների եւ որոշակի անձանց բնութագրի շրջանակներում։ Դաւանական տարամիտումների եւ պայքարի յետեւում, մասնաւորապէս Յ. Նալեանի եւ Գր. Պասմաճեանի պատրիարքութեան ժամանակ, մշտապէս ներկայ էր նոր հրապարակ իջած դասը՝ որպէս համայնքի ընթացքն ուղղորդող ոյժ, որի մասին խօսեցինք վերը։ Այստեղ աւելացնենք, որ հայրենի եկեղեցու եւ միւս կողմից կաթոլիկամէտ համակրանքներով յայտնի ամիրաների միջեւ նոյնպէս ի յայտ էին գալիս նշուած հակասութիւնները, որոնց հիմքում ընկած էր մրցակցութիւնը արդիւնաւոր պաշտօններ ստանալու (նաեւ ֆինանսական եւ միութէվէլիական համակարգում) եւ վարչական տնտեսական ոլորտում ազդեցիկ դիրքեր ունենալու համար։ Եւ մէկ, եւ միւս դէպքերում ամիրաներն ակնկալում էին իշխանութիւն ստանալ համայնքում կամ ամրապնդել ստացածը՝ օգտագործելով օսմանեան արքունիքի, մեծ վեզիրի կամ այլ աստիճանաւորների հետ իրենց ունեցած կապերն ու ծանօթութիւնները։

Դաւանութեան հանգամանքը եւս կարող էր ծառայել վերոյիշեալ նպատակները հետամտող գործնական խնդիրներին։ Պասմաճեան Պատրիարքի «Յիշատակարան»-ում բազմիցս շրջանառող ամիրա Գասպար Մուրատեանը եւ այլ անանուն ամիրաներ չէին յապաղում ուղղորդել «Մանուէլեան խմբակի» (Մ. Արք. Օրմանեանի արտայայտութիւնն է) խօսքն ու գործողութիւններն ընդդէմ Յ. Նալեանի եւ ապա Գր. Պասմաճեանի՝ հանդէս գալով իբրեւ կաթոլիկականութեան երդուեալ հակառակորդներ։

Գործում էին նաեւ ազդեցիկ կաթոլիկամէտները, որոնք իրենց համախոհներին

---

[19] **Ղ. Տայեան**, Մայր դիւան Մխիթարեանց Վենետկ.,,ոյ ի Ս. Ղազար, 1930, էջ 219։

[20] Յիշատակարան Պասմաճեան Գրիգոր Պատրիարքի, հրատ. Կիւլէսէրեան Բ, Պարիս, 1908, էջ 131 (այսուհետեւ՝ Յիշատակարան)։

փորձում էին ազատել իշխանութիւնների հարուածներից, յատկապէս երկուստեք մատնութիւնների ու սադրանքների պայմաններում։ Այս առթիւ Մ. Չամչեանը նկատում է, որ երեւելիներից Պաղտասար Սրմաքէշ եւ Միքայէլ Տիւզն (յայտնի ամիրայական տոհմից եւ Միքայէլի անները) «հռոմէականութեան հակամէտներ ըլլալով մէկտեղ՝ խօսքով կը մերժէին իբր զրպարտութիւն ամբաստանողաց», որ եւ հաստատում է, ի դէպ, Յ. Թովմաճանեանը։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետեւ օսմանեան պետութիւնը բացասական կտրուկ դիրքորոշում ունէր իր միլեթի դաւանանքից հրաժարուած կամ հրաժարուող անձանց նկատմամբ։ Միքայէլ Տիւզը, որքան եւ զօրեղ պաշտպաններ ունենար արքունիքում կամ այլուր, չէր կարող բացառութիւն կազմել։

Գր. Պասմաճեանի յուշերում կրկին յայտնւում է Տէր Մանուէլը, որն իր բանսարկութիւնների եւ խառնակիչ արարքների համար արտաքսուել էր եւ աքսորից ու բանտարկութիւնից ազատուելով (Յ. Նալեանի մահից յետոյ)՝ վերադարձել էր մայրաքաղաք։ Կարելի է կարծել, որ նա ազատուել էր ամիրա Գասպար Մուրատեանցի օժանդակութեամբ, որը, ըստ Հ. Ասատուրի, «Տէր Մանուէլի բարեկամներէն էր»[21]։

«Յիշատակարանը», եթէ այս ամէնին աւելացնենք այս պատրիարքի կրօնաբարոյական եւ բարեպաշտական ազնիւ խորհրդածութիւնները, աչքի է ընկնում ժամանակի բարքերի նկատմամբ հեղինակի քննադատական վերաբերմունքով եւ մասամբ, նրա դաւանական ազատամտութեամբ, որին կանցնենք քիչ անց։ Ակնյայտ է նաեւ պատրիարքի հակադրութիւնը ամիրայական նորաթուխ դասին. վերջինիս յայտնութիւնը եւ ձեռք բերած առաւելութիւնները նա դիտարկում է պահպանողական դիրքերից, որպէս հանրութեան համար ողբալի մի երեւոյթի, որի գռեհկական ամրապնդմամբ կործանւում են հին, աւանդական արժէքները։ «Յառաջագոյն կոչեցեալք լինէին ազնուականք եւ պարոնայք, բաց ի յետին եւ ի վերջին ժամանակիս գեղականք, շինական եւ զաւակունք նոցին ձայնեն առ միմեանս պարոնս եւ ամիրայս։ Ուրեմն արժան է ցաւել եւ ողբել ի վերայ խղճացեալ ազգիս»[22], գրում է նա։ Պասմաճեան պատրիարքի բացայայտ թիրախը գաւառներից մայրաքաղաք տեղափոխուած եւ եկամտաբեր պաշտօններ ստացած նորելուկ դրամատէր (մեծ մասամբ՝ սեղանաւոր դարձած) եւ յաջողակ հայերն էին, որոնք շտապում էին իրենց սոցիալական նոր նկարագիրը հաստատել ամիրայական պատուաբեր տիտղոսով։

Այս անձինք են, որ Գասպար ամիրայի ներշնչումներով Պասմաճեան Պատրիարքին հարկադրել են վճարել Երուսաղէմի արդէն վախճանուած Կարապետ Պատրիարքի ժամանակ գոյացած պարտքը՝ յետին թուով մուրհակ ստորագրել տալով։ Ինքը՝ Գր. Պասմաճեան Պատրիարքը, սակայն, այդպէս անզօր եւ անօգնական չի եղել իր թշնամիների առջեւ, որքան էլ որ այդպիսին երեւայ իր շարադրանքում։ Նրա ջանքերով աքսորից վերադարձած եւ իր քսութիւնները նորոգած Մանուէլ երէցը ոմն Աբրահամ Ակնեցու հետ իրենց խառնակչութիւնն աւարտում են աքսորով եւ բանտարկութեամբ[23]։ Գր. Պասմաճեանի յետագայ ընթացքը եւս ուղեկցուել է համայնքի վերնախաւում առկայ դաւանական տարաձայնութիւններով։ Պատրիարքը եւ նրան համակիր շրջապատը տեղի էին տալիս պահպանողական ուժերի ճնշմանը, ամիրայական դասի ներսում յայտնուած նոր մարդկանց իշխանական ձգտումներին, որոնց իրացման ձեւերն ու եղանակները նրանք դրսեւորում էին դաւանական անաղարտութեան ձեւակերպումներով ու դրան

[21] **Հ. Ասատուր**, Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ստանպուլ, 2011, էջ 116։

[22] Յիշատակարան, էջ 83։

[23] Անդ, էջ 56։

համապատասխան գործելակերպով։ Այսու հանդերձ, պատրիարքը ըստ հնարաւորին դիմակայել է իր նեղիչներին, եւ եթէ իր խառնուածքի ու հնարաւորութիւնների սահմաններում, ապա պէտք է ասել, այդ սահմանները միանգամայն համապատասխանում էին նրա պաշտպան ամիրաների փոփոխամտուեանն ու համեստ կարողութիւններին։ Ճիշդ էր նկատում Լէոն, երբ գրում էր, որ Պասմաճեան Պատրիարքը «մաքառեց իր հակառակորդների դէմ, որոնց ձեռքում զէնք էր դարձել պատրիարքի համբերող եւ մեղմ վերաբերմունքը դէպի հայ կաթոլիկները»[24]։

Հակառակորդների ճնշման ներքոյ Պասմաճեան Պատրիարքը հրաժարական տուեց 1772 թ. Փետրուարի 22-ին, որի հրապարակմանը ներկայ էին վեց համայնքից (պոլսահայ հանրութեան) աւելի քան հազար մարդ։ Նրանք, սակայն, պաշտպանում են պատրիարքին՝ հակառակորդներից եւ անվերապահօրէն խոստանում իրենց աջակցութիւնը[25]։ Իր մեղմ բնաւորութեան համեմատ, պատրիարքն ընկրկում է եւ յետ առնում իր հրաժարականը, բայց կարճ ժամանակ անց, ինչպէս բողոքում է ինքը, աջակիցները մոռանում են իրենց խոստումը եւ նրան միայնակ թողնում հակառակորդների առջեւ[26]։ Սրանց մատնագրերի, օսմանեան իշխանաւորներին ուղղուած՝ Պասմաճեանի դէմ բողոքների մի նշանակալի մասը վերաբերում էր դաւանական մեղանչումներին, որ իբր, թոյլ էր տուել պատրիարքը։ Վերջինս հերքում է այդ մեղադրանքները՝ բոլորն էլ պահպանողականութեան թշնամական կեցուածքից բխող եւ որոնց մէջ մենք կ՚առանձնացնենք զօշաքաղութեան (կոռուպցիա) եւ պետական ու կրօնական բնոյթի յանցագործութիւնները, թէ, իբր, նախապէս պատրիարքը դաւանել է մահմետական կրօնը, կամ հայութեանը հնազանդեցրել է պապին եւ այլն։ Այդ յանցագործութիւններից շատերը, եթէ հաստատուէին, ամենածանր հետեւանքներ կարող էին ունենալ նրա համար[27]։ Համենայն դէպս, վերը յիշուած մեղադրանքների հանդէպ օսմանեան իշխանութիւններն առհասարակ զգայուն էին եւ պատրաստ՝ գործի դնելու կաթոլիկամէտներին պատուհասող գաւազանը։ Պէտք է արժանին հատուցել Բ. Կիւլէսէրեանին, որի կարծիքով Գր. Պասմաճեանը չկարողացաւ շարունակել Յ. Կոլոտի եւ Յ. Նալեանի ուղեգիծը դաւանական խնդրում, եւ որ Գասպար ամիրան աւելի ճարտար դուրս եկաւ «յանուն եկեղեցւոյ ճակատելու կողմէն», իսկ պատրիարքը «հետզհետէ կը յաղթուի կրօնական վիճաբանութեան մէջ եւ կասկածելի կը դառնայ ռամիկ աստուածաբանին յաւակնութիւններուն առջեւ՝ հակառակ իրեն շռայլած աստուածաբան, գիտնական եւ գերիմաստ տիտղոսներուն»[28]։

Նկատենք, որ Գր. Պասմաճեանը՝ այդ կրթուած եկեղեցականը եւ Յ. Կոլոտի աշակերտը ամենեւին էլ չի յաղթուել անտաշ ամիրայի հետ կրօնական թեմաներով վիճաբանութիւններում, յամենայն դէպս, այդպիսի եզրակացութեան համար, կարծում եմ, հիմքեր չեն տալիս ոչ ինքը՝ յուշագրողը, եւ ոչ էլ որեւէ մէկը։ Կարելի է կարծել նաեւ, որ նա միայնակ է մնացել նոյն՝ դաւանական հարցերում խճճուելու, կրօնական կողմնակցութիւնների եւ օսմանեան իշխանութիւնների հետ ճկուն ու հաւասարակշիռ դիրքորոշման բացակայութեան հետեւանքով, ինչը ունէին եւ յաջողութեամբ իրականաց-

[24] **Լէօ**, Երկերի ժողովածոյ, հ. 3, գիրք 2, Երեւան, 1973, էջ 459։

[25] Գր. Պասմաճեանին աջակցութիւն խոստացող «մահսարական գիրը» («Մեր պատրիարքին բարեկամք եմք եւ թշնամոյն վրէժխնդիր՝ գլխով չափ», տե՛ս **Գր. Գալէմքեարեան**, Կենսագրութիւն երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1915, էջ 343)։

[26] Յիշատակարան, էջ 95-96։

[27] Անդ, էջ 134, 55։

[28] Անդ, էջ 134։

նում էին Յ. Կոլոտ եւ Յ. Նալեան պատրիարքները։

Հայ համայնքի ներսում շարունակուող դաւանական այս խմորումները, դատելով Պասմաճեան Պատրիարքի գլխին թանձրացող անբաւականութեան եւ կասկածների մըթնոլորտից, ապահովաբար, նաեւ նրան լքած բարեկամների փոքրոգութիւնից, անհնարին դարձրեցին նրա յետագայ պաշտօնավարումը։ Պատրիարքը հրաժարական տուեց 1773 թ. Նոյեմբերին՝ իրեն դուրս դնելով առաջիկայ դաւանական գժտութիւնների յորձանուտից, որոնք էլ աւելի սաստկութեամբ ալեկոծելու էին հայ հանրութեանը՝ նրա յաջորդ Զաքարիա Կաղզուանցի Պատրիարքի ժամանակ նկատմամբ։

Ամփոփենք. Գր. Վրդ. Պասմաճեանի պատրիարքութեան տարիներին շարունակուեցին եւ աւելի սրուեցին դաւանական հակասութիւնները Կ. Պոլսի հայ համայնքում, որ մի յայտնի չափով արեւմտեան տէրութիւնների ու նրանց գաղափարախօսութեան հանդէպ Բ. դրան քաղաքականութեան խստացումն էր, միլեթների համակարգը այդ գաղափարախօսութեան հարուածներից պաշտպանելու աւանդական դիրքորոշման ամրապնդումը։ Ինքը՝ հայ համայնքն ապրում էր հանրային եւ մտաւոր փոփոխութիւններ, որոնք ուղեկցւում էին ամիրայական դասի ձեւաւորմամբ ու տնտեսական կարողութիւնների հաստատմամբ, համայնքում նրա անվիճելի գերակայութեամբ՝ պատրիարքական իշխանութեան նկատմամբ։ Պասմաճեան Պատրիարքի գործունէութիւնն ու կեցուածքը ակնյայտօրէն տարուբերւում էր փաստական իշխանութիւն նուաճած ամիրայութեան եւ իրենց դաւանական ազդեցութիւնը տարածող կաթոլիկամէտ տարրերի երկկողմանի ազդեցութիւնների միջեւ։ Արդիւնքում՝ պատրիարքական իշխանութեան թուլացումը Կ. Պոլսում եւ առհասարակ հայութեան արեւմտեան հատուածում։ XVIII դ. երկրորդ կէսի եւ ոչ մի պատրիարք այնքան անզօր չի եղել դաւանական ներհակութիւնների յորձանուտում, որքան Պատրիարք Պասմաճեանը՝ այս իմաստով ի տարբերութիւն անհատականութեան նկարագրով առանձնացող՝ Յ. Կոլոտի եւ Յ. Նալեանի։ Այս պայմաններում տարաձայնութիւններ էին առաջանում ազգային արժէքները կրող ու պահպանող եկեղեցու եւ արեւմտեան գաղափարախօսութիւնը իւրացնելուն պատրաստ կրօնական ու աշխարհիկ հանրութեան մի մասի միջեւ։ Պասմաճեան Պատրիարքն ի զօրու չէր բաւարար ճկունութիւն ցուցադրել պոլսահայ ծայրայեղ պահպանողական ոյժերի եւ օսմանեան իշխանութիւնների միջեւ, որի հետեւանքը եղաւ նրա հրաժարականը։

ԱԼՊԵՐԹ ԽԱՌԱՏԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դոկտոր, փրոֆ.